

Գեներային հիմնահարցեր

Գեներային իրավիճակի գլոբալ վերլուծությունը միջազգային հանրությանը ներկայացվեց կանանց դրության վերաբերյալ ՄԱԿ-ի 1995թ. Պեկինյան չորրորդ խորհրդաժողովում, որտեղ ձևակերպվեցին նաև գեներային հիմնահարցերը և առաջիկա գործողությունների ծրագրերը: Մասնավորապես, տեղեկատվական ապահովման բնագավառում խորհրդաժողովի բանաձևումների համաձայն սահմանվեց հետևյալը՝

- համաձայն 206 (ա) կետի ազգային, տարածաշրջանային և միջազգային վիճակագրական ծառայությունները, ինչպես նաև նրանց հետ կապի մեջ գտնվող կառավարական և ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունները իրենց իրավասության սահմաններում համագործակցելով գիտահետազոտական հաստատությունների հետ պետք է ապահովեն անհատների վերաբերյալ սեռատարիքային վիճակագրական տվյալների հավաքագրումը, մշակումը, վերլուծությունն ու ներկայացումը՝ արտացոլելով հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կանանց և տղամարդկանց փոխհարաբերությունն ու հիմնահարցերը:
- 207 (ա) կետով՝ պետությունները պետք է ապահովեն կանանց և տղամարդկանց վերաբերյալ վիճակագրական տվյալների հրատարակումներն այնպես, որ վերջիններս մատչելի (հասկանալի, ընկալելի) լինեն հասարակության լայն խավերի համար:

Հայաստանի Հանրապետության 1998–2000թթ. ազգային ծրագիրը

Նպատակաուղղված լինելով ՀՀ Սահմանադրության 15 հոդվածով ամրագրված կանանց և տղամարդկանց հավասար իրա-

վունքների և հնարավորությունների ապահովմանը, «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի և ՄԱԿ-ի Պեկինյան չորրորդ Համաշխարհային խորհրդաժողովի հանձնարարականների կատարմանը, ինչպես նաև ՀՀ կառավարության 1998թ. ապրիլի 15-ի «ՀՀ կանանց վիճակի բարելավման ծրագրի հիմնադրույթների մասին» թիվ 242 որոշման համապատասխան` ՀՀ կառավարության 1998թ. հունիսի 26-ի թիվ 406 որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետությունում 1998-2000թթ. կանանց վիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրը, որով սահմանվեցին միջոցառումներն իրականացնող մարմինները և ծրագրի ժամանակացույցը:

Ծրագիրը, մասնավորապես, անդրադառնում է այնպիսի հիմնահարցերի, ինչպիսիք են`

- ՀՀ օրենսդրության գենդերային փորձաքննության անցկացում,
- ՀՀ պետական կառավարման համակարգում կանանց ներկայացուցչական մակարդակի բարձրացում,
- կանանց զբաղվածությունն ապահովող ծրագրերի մշակում և իրականացում,
- բռնության ենթարկված և հանցավոր գործողություններից տուժած կանանց սոցիալ-հոգեբանական և մատուցվող այլ ծառայությունների բարելավում,
- անչափահաս, հակահասարակական վարքագիծ ունեցող աղջիկների հետ տարվող կանխարգելիչ-դաստիարակչական աշխատանքների կազմակերպում,
- կին ձեռներեցներին, ինչպես նաև ընտանեկան ձեռնարկության կին կազմակերպիչներին աջակցում,
- աշխատող կանանց աշխատանքի պաշտպանությանն ուղղված միջոցառումների մշակում,

- կանանց սոցիալ-տնտեսական վիճակի մասին վիճակագրական տվյալների հավաքագրում և վիճակագրական-վերլուծական տեղեկագրերի հրատարակում:

Գեոդերային վիճակագրական-վերլուծական սույն ժողովածուն՝ իրականացված վերը հիշատակված հիմնահարցերի լույսի ներքո, նպատակ է հետապնդում լուսաբանելու Հայաստանի Հանրապետությունում կին-տղամարդ փոխհարաբերությունը, հասարակական կյանքում նրանց հնարավորությունների օգտագործման ներկա վիճակը և ստեղծելու տեղեկատվական անհրաժեշտ բազա՝ պետական գեոդերային (կանանց և տղամարդկանց համար հավասար պայմաններ ապահովող) քաղաքականության մշակման համար: